«ԴԻՄԱԿԱՅՈՒՆ և ՄԻԱՎՈՐՎԱԾ. ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԴԴԵՄ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ»

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՔՀԿ-ՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ (OCAT-IR) ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ(ՆԵՐ)Ի ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Նշում. OCAT-IR-ը նշանակում է «Կազմակերպական կարողությունների գնահատման գործիք – Տեղեկատվական դիմակայունություն» (Organisational Capacity Assessment Tool – Information Resilience):

«Մարդը կարիքի մեջ» (People in Need, PIN) հասարակական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը հայտարարում է փորձագետ(ներ)ի ընտրության մրցույթ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ-ներին) աջակցելու նպատակով՝ իրականացնելու իրենց ինքնագնահատումը՝ տեղեկատվական միջավայրում իրենց ինքնության և դերի, երկրի տեղեկատվական միջավայրում և առկա սպառնալիքներում կողմնորոշվելու կարողությունների, իրենց շահառուների հետ հաղորդակցության, ապատեղեկատվությանը դիմակայելու և այն բացահայտելու, ինչպես նաև օտարերկրյա տեղեկատվական մանիպուլյացիաներն ու միջամտությունները (FIMI – Foreign Information Manipulation and Interference) մշտադիտարկելու և դրանց հակազդելու կարողությունների վերաբերյալ:

Գործունեությունն իրականացվում է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Դիմակայուն և միավորված. համատեղ նախաձեռնություններ ընդդեմ ապատեղեկատվության» ծրագրի շրջանակում:

1. Ծրագրի մասին

«Դիմակայուն և միավորված. համատեղ նախաձեռնություններ ընդդեմ ապատեղեկատվության» ծրագիրն իրականացվում է «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի, Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոնի և Նիդերլանդների Հելսինկյան կոմիտեի կողմից՝ 2025 թվականի դեկտեմբերից մինչև 2029 թվականն ընկած

ժամանակահատվածում՝ Արևելյան գործընկերության երկրներում, այդ թվում՝ Հայաստանում և համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Ծրագրի նպատակն է ամրապնդել հասարակության կարողությունը՝ ճանաչելու և դիմակայելու ապատեղեկատվությանը՝ աջակցելով քաղաքացիական հասարակությանը, անկախ լրատվամիջոցներին և ոլորտային մասնագետներին՝ խթանելու մեդիագրագիտությունը, քննադատական մտածողությունը և հուսալի տեղեկատվության հասանելիությունը, հատկապես երիտասարդների, գյուղական համայնքների և այլ խոցելի խմբերի համար:

Սույն մրցույթի շրջանակում իրականացվող գործունեության նպատակն է ապահովել, որպեսզի ծրագրի մասնակից քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ-ները) ունենան համայնքներում շրջանառվող խոսույթների, խեղաթյուրումների և մոլորեցնող նարատիվների վերաբերյալ հիմնարար իրազեկվածություն, կարողանան կշռադատված որոշումներ կայացնել՝ երբ և ինչպես արձագանքել դրանց, իսկ երբ՝ չարձագանքել, իրենց համայնքների հետ հաղորդակցվեն վստահելի և հետևողական կերպով, լինեն դիմակայուն իրենց՝ որպես կազմակերպությունների դեմ ուղղված սպառնալիքների նկատմամբ և իմանան, թե ում կարող են դիմել աջակցության համար այն իրավիճակներում, որոնք գերազանցում են իրենց կարողությունները:

Գնահատման արդյունքները յուրաքանչյուր կազմակերպության համար կծառայեն որպես ելակետային տվյալ (բազային գնահատում) և հիմք կհանդիսանան Կազմակերպական զարգացման գործողությունների ծրագրի (Development Action Plan – DAP) մշակման համար:

2. Առաջադրանքի նպատակները

Փորձագետ(ներ)ը սերտորեն կհամագործակցի քաղաքացիական հասարակության մինչև 18 կազմակերպությունների (ՔՀԿ-ների) հետ՝ նրանց ներգրավելով մասնակցային ինքնագնահատման գործընթացում՝ գնահատելու կազմակերպությունների տեղեկատվական դիմակայունության կարողությունները՝ հաշվի առնելով յուրաքանչյուր կազմակերպության իրավիճակը, հավակնությունները և դերը: Գնահատումն իրականացվելու է PIN-ի կողմից մշակված «Կազմակերպական կարողությունների գնահատման – Տեղեկատվական դիմակայունություն» (OCAT-IR) գործիքի կիրառմամբ:

Ինքնագնահատումն իրականացվելու է ֆասիլիտացված աշխատարանների միջոցով, որոնք նպատակ ունեն աջակցելու ՔՀԿ-ների թիմերին՝ (1) սահմանելու տեղեկատվական դիմակայունության իրենց ելակետային մակարդակը; (2)

բացահայտելու աջակցության կոնկրետ կարիքները՝ հնարավորություն ընձեռելով PIN ծրագրային թիմին մշակել նպատակային միջամտություններ, օրինակ՝ վերապատրաստումներ, փորձի փոխանակման հարթակներ, մեթոդաբանական աջակցություն, ուղղակի օժանդակություն կամ կապերի ստեղծում այլ դերակատարների հետ; (3) ձևավորելու դաշտային մակարդակի գիտելիք տեղական տեղեկատվական էկոհամակարգերի, համայնքային կարիքների և հաճախ թերագնահատվող դիմակայունության ռեսուրսների վերաբերյալ, ինչպիսիք են ոչ ֆորմալ ցանցերը, համայնքի վստահելի ներկայացուցիչները և տեղական այն կառույցները, որոնք արդեն նպաստում են դիմակայունության ամրապնդմանը; (4) OCAT-IR գնահատման արդյունքների հիման վրա փորձագետ(ներ)ը նաև կուղղորդի Կազմակերպական զարգացման գործողությունների ծրագրի (Development Action Plan – DAP) մշակումը՝ սահմանելով առաջնահերթությունները, հիմնական փուլերն ու ժամկետները, անհրաժեշտ ռեսուրսները և կարողությունների զարգացման կարիքները:

3. Առաջադրանքի նկարագիրը

Փորձագետ(ներ)ը պետք է կատարի հետևյալ առաջադրանքները՝

Նախապատրաստական փուլ .

- Մասնակցել PIN-ի տեխնիկական խորհրդատուի կողմից անցկացվող ներածական հանդիպմանը՝ OCAT-IR մեթոդաբանության և Կազմակերպական զարգացման գործողությունների ծրագրի (Development Action Plan – DAP) մշակման գործընթացի վերաբերյալ՝ OCAT-IR գործիքի, կիրառվող մոտեցման և ակնկալվող արդյունքների հստակ ընկալումն ապահովելու նպատակով:
- Ուսումնասիրել ընտրված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-ների) վերաբերյալ առկա տեղեկատվությունն ու կազմակերպությունների պրոֆիլները՝ ֆասիլիտացման մոտեցումը յուրաքանչյուր կազմակերպության առանձնահատկություններին և համատեքստին համապատասխանեցնելու նպատակով:
- Մասնակցել ծրագրային թիմի կողմից կազմակերպվող առցանց մեկնարկային հանդիպմանը, որի նպատակն է ընտրված բոլոր ՔՀԿ-ներին ներկայացնել OCAT-IR գործիքը և գործունեության իրականացման նախնական ժամանակացույցը:
- Նախապատրաստել աշխատարանների իրականացման համար անհրաժեշտ նյութերն ու գործիքները:

OCAT-IR աշխատարանների ֆասիլիտացման փուլ

- Յուրաքանչյուր քաղաքացիական հասարակության կազմակերպության (ՔՀԿ) համար անցկացնել OCAT-IR աշխատարաններ՝ կեսօրյա մասնակցային ձևաչափով, հնարավորություն ընձեռելով մասնակից թիմերին իրականացնել իրենց կարողությունների ինքնագնահատում՝ տեղեկատվական միջավայրում կողմնորոշվելու, իրենց համայնքների հետ արդյունավետ հաղորդակցվելու, ապատեղեկատվությունը ճանաչելու և դրան դիմակայելու, ինչպես նաև իրենց համայնքներում շրջանառվող կեղծ կամ մոլորեցնող տեղեկություններին, այդ թվում՝ կազմակերպության և/կամ նրա գործունեության ոլորտի վերաբերյալ, արձագանքելու կարողությունների տեսանկյունից:
- Գնահատման գործընթացը բաղկացած կլինի երկու փուլից՝ նախնական ինքնագնահատման հարցաթերթի լրացում կազմակերպությունների կողմից՝ մինչև աշխատարանի անցկացումը և ֆասիլիտացված քննարկումներ, որոնք միտված կլինեն առավել խորությամբ ուսումնասիրել և վավերացնել պատասխանները, բացահայտել կազմակերպությունների ուժեղ կողմերը, առկա մարտահրավերները և հետագա զարգացման ուղղությունները:

<u>Գործողությունների ծրագրերի մշակում և կարողությունների զարգացման կարիքների բացահայտում</u>

- Աջակցել քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ-ներին)՝ բացահայտելու իրենց կարողությունների զարգացման կարիքները՝ օտարերկրյա տեղեկատվական մանիպուլյացիաներին և միջամտություններին (FIMI) հակազդելու, տեղեկատվական միջավայրում արդյունավետ գործելու, մեդիագրագիտության, ռազմավարական հաղորդակցության և քաղաքացիական մասնակցության ուղղություններով՝ ներառյալ իրականացման ժամկետների, անհրաժեշտ ռեսուրսների, ինչպես նաև դերերի և պատասխանատվությունների սահմանումը:
- Յուրաքանչյուր ՔՀԿ-ի համար ֆասիլիտացնել երկժամյա աշխատարան՝ աջակցելու նրանց մշակելու Կազմակերպական զարգացման գործողությունների ծրագրեր (Development Action Plans – DAP-եր), որոնք միտված են կազմակերպությունների տեղեկատվական դիմակայունության ամրապնդմանը և FIMI-ին ու ապատեղեկատվությանը ակտիվորեն հակազդելու նրանց կարողությունների զարգացմանը:

<u>Վերլուծության և հաշվետվությունների պատրաստման փուլ</u>

- Պատրաստել և ներկայացնել OCAT-IR գնահատման համախմբված հաշվետվություն՝ ներկայացնելով հիմնական բացահայտումները, նույնականացված կազմակերպական կարողությունների բացերն ու հիմնական եզրահանգումները:

- Ներկայացնել փորձագետ(ներ)ի աջակցությամբ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-ների) կողմից մշակված Կազմակերպական զարգացման գործողությունների ծրագրերը (Development Action Plans – DAP-երը):
- Պատրաստել և ներկայացնել վերջնական բովանդակային հաշվետվություն՝ ամփոփելով հիմնական բացահայտումները, արձանագրված մարտահրավերները, կիրառված մեթոդաբանությունը և հետագա գործողությունների վերաբերյալ առաջարկությունների փաթեթը:

<u>OCAT-IR վերջնական (Endline) աշխատարանների ֆասիլիտացում</u>

- Ծրագրի ավարտին (նախնական նախատեսված ժամկետը՝ 2027 թվականի մայիս-հունիս) յուրաքանչյուր քաղաքացիական հասարակության կազմակերպության (ՔՀԿ) հետ անցկացնել անհատական առցանց հանդիպում՝ գնահատելու ձեռք բերված արդյունքները և գնահատման միավորների փոփոխությունները, ինչպես նաև ներկայացնել հաշվետվություն՝ հիմնվելով «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի կողմից տրամադրված ձևանմուշի վրա:

  Նշում 1. Բոլոր հաշվետվությունները պետք է պատրաստվեն «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի կողմից տրամադրված ձևանմուշների համաձայն:

  Նշում 2. Այն դեպքերում, երբ աշխատարաններն անցկացվում են ընտրված ՔՀԿ-ների տարածքներում, փորձագետ(ներ)ի տեղափոխությունը կկազմակերպվի «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի կողմից:

4. Արդյունք/ ակնկալվող փաստաթղթեր՝

Արդյունք	Առաջադրանքն ավարտելու և արդյունքին հասնելու համար անհրաժեշտ գնահատված ժամանակը	Արդյունքների ներկայացման վերջնաժամկետ	Համապատասխան նշումներ

1. *Նախապատրաստական փուլ*			
OCAT-IR և DAP մեթոդաբանությունների ներածական հանդիպում	4 ժամ	2026 թվականի հուլիս	Փորձագետ(ներ)ը ակտիվորեն կմասնակցի «Մարդը կարիքի մեջ»ՀԿ-ի քաղաքացիական հասարակության հարցերով խորհրդատուի կողմից անցկացվող ներածական հանդիպմանը և կդրսևորի գործիքներն ու մեթոդաբանությունը գործնականում կիրառելու պատրաստակամություն
ՔՀԿ-ների պրոֆիլների ուսումնասիրություն՝ ֆասիլիտացման մոտեցումը հարմարեցնելու նպատակով	1 ժամ մեկ ՔՀԿ-ի համար (ընդհանուր մինչև 18 ժամ)	Մինչև աշխատարանների անցկացումը	Փորձագետ(ներ)ը կուսումնասիրի յուրաքանչյուր ՔՀԿ-ի առանձնահատկություններն ու համատեքստը՝ OCAT-IR և DAP աշխատարաններին նախապատրաստվելիս յուրաքանչյուր կազմակերպության համար համապատասխանեցված ֆասիլիտացման մոտեցում մշակելու նպատակով:
Մասնակցություն ծրագրի առցանց մեկնարկային հանդիպմանը	2 ժամ	2026 թվականի օգոստոս/սեպտեմբեր (նախնական)	Դասընթացավար(ներ)ը կներկայացնի ՔՀԿ-ներին OCAT-IR գործիքը, իրականացման ժամկետները և ծրագրային թիմի ակնկալիքները:

ՔՀԿ-ների կողմից OCAT-IR աշխատարաններից առաջ լրացված նախնական ինքնագնահատման հարցաթերթերի վերլուծություն	1 ժամ մեկ ՔՀԿ-ի համար (ընդհանուր մինչև 18 ժամ)	2026 թվականի օգոստոս (նախնական)	Փորձագետ(ներ)ը մանրակրկիտ կուսումնասիրի և կվերլուծի յուրաքանչյուր ՔՀԿ-ի կողմից ծրագրային թիմի մշակած և էլեկտրոնային փոստով տրամադրված հարցաթերթի միջոցով ներկայացված տեղեկատվությունը: Հարցաթերթը հիմք կհանդիսանա OCAT-IR աշխատարանների ընթացքում յուրաքանչյուր ՔՀԿ-ի հետ խորքային քննարկումներ նախաձեռնելու համար:
OCAT -IR և DAP աշխատաժողովների անցկացման նախապատրաստում	3 ժամ	2026 թվականի օգոստոս (նախնական)	Փորձագետ(ներ)ը կպատրաստի աշխատարանների անցկացման համար անհրաժեշտ նյութերն ու գործիքները:
2. *<u>OCAT - IR աշխատարանների փուլի ֆասիլիտացիա</u>*			
OCAT- IR-ի վրա հիմնված կարողությունների գնահատումն ավարտվել է բոլոր ընտրված ՔՀԿ-ների համար՝ մասնակցային աշխատարանների միջոցով:	4 ժամ մեկ ՔՀԿ-ի համար (ընդհանուր մինչև 72 ժամ)	Համաձայն ՔՀԿ-ի հետ համաձայնեցված (նախնական փուլում՝ 2026 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին)	Փորձագետ(ներ)ը յուրաքանչյուր ընտրված քաղաքացիական հասարակության կազմակերպության (ՔՀԿ) հետ կանցկացնի առկա կամ առցանց ձևաչափով OCAT-IR աշխատարաններ: Դրանք կաջակցեն ՔՀԿ-ների թիմերին իրականացնել իրենց կարողությունների

			ինքնագնահատում՝ տեղեկատվական միջավայրում կողմնորոշվելու, իրենց համայնքների հետ արդյունավետ հաղորդակցվելու, կեղծ տեղեկատվությանը արձագանքելու, ինչպես նաև օտարերկրյա տեղեկատվական մանիպուլյացիաները և միջամտությունները (FIMI) բացահայտելու, մշտադիտարկելու և դրանց հակազդելու կարողությունների տեսանկյունից:
3. Գործողությունների ծրագրերի մշակում և կարողությունների զարգացման կարիքների բացահայտում			
ՔՀԿ-ների DAP-երի մշակման և կարողությունների զարգացման կարիքների բացահայտման աշխատարանների ֆասիլիտացում:	2 ժամ մեկ ՔՀԿ-ի համար (ընդհանուր մինչև 36 ժամ)	Համաձայն ՔՀԿ-ի հետ համաձայնեցված (նախնական փուլում՝ 2026 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին)	Փորձագետ(ներ)ը OCAT-IR աշխատարաններին մասնակցած ՔՀԿ-ների հետ կանցկացնի առցանց և/կամ առկա հանդիպումներ՝ աջակցելու նրանց DAP-երի մշակման և կարողությունների զարգացման կարիքների բացահայտման գործընթացում:
4. *Վերլուծության և հաշվետվության փուլ*			
OCAT -IR գնահատման համախմբված զեկույց, որը	3 ժամ մեկ ՔՀԿ-ի համար (ընդհանուր	OCAT -IR և DAP աշխատարանների ավարտից	Հաշվետվությունը կներառի յուրաքանչյուր ՔՀԿ-ի ուժեղ կողմերի և

ներկայացնում է յուրաքանչյուր ՔՀԿ-ի հիմնական արդյունքները:	մինչև 54 ժամ)	հետո (նախնական փուլում՝ սեպտեմբերի կեսերից մինչև հոկտեմբերի կեսերը)	կարողությունների բացերի վերլուծություն, ինչպես նաև առաջարկություններ՝ առաջնահերթ կարողությունների զարգացման կարիքների և յուրաքանչյուր կազմակերպության համար համապատասխանեցված աջակցության միջամտությունների ձևաչափերի վերաբերյալ:
Վերջնական հանձնարարականի հաշվետվություն	Մինչև 8 ժամ	Բոլոր հանձնարարված առաջադրանքներն ավարտելուց հետո (նախնական տվյալներով՝ նոյեմբերին)	Անգլերեն լեզվով ներկայացված զեկույցը կներկայացնի մանրամասներ կիրառված մեթոդաբանությունը, հիմնական եզրակացություններն ու մարտահրավերները, ինչպես նաև հետագա գործողությունների և ապագա կարողությունների զարգացման աջակցության առաջարկությունները:
Վերջնական OCAT-IR-ի անցկացում	2 ժամ մեկ ՔՀԿ-ի համար (ընդհանուր մինչև 36 ժամ)	Կարողությունների զարգացման գործողությունների ավարտից հետո (նախնականորեն՝ 2027 թվականի	Ծրագրի ավարտին անցկացնել անհատական առցանց հանդիպումներ ՔՀԿ-ների հետ՝ ձեռք բերված արդյունքները և գնահատականների փոփոխությունները գնահատելու համար, և

		մայիս-հունիս ամիսներին)	ներկայացնել զեկույց՝ հիմնվելով PIN-ի կողմից տրամադրված ձևանմուշի վրա :
Վերջնական OCAT գնահատման զեկույց	2 ժամ մեկ ՔՀԿ-ի համար (ընդհանուր մինչև 36 ժամ)	2027 թվականի հունիս-հուլիս	Վերջնական OCAT գնահատման զեկույց (անգլերեն), ներառյալ մեթոդաբանությունը, հիմնական արդյունքները և առաջարկությունները:
Ընդհանուր ժամեր	Մինչև 287 ժամ		

Նշում. առաջադրանքի իրականացման և արդյունքների ապահովման համար անհրաժեշտ գնահատված ժամանակը կարող է ճշգրտվել՝ կախված ներգրավված դասընթացավար(ների) թվից, ընտրված ՔՀԿ-ների պրոֆիլից և գտնվելու վայրից, ինչպես նաև իրականացման ընթացքում անհրաժեշտ աջակցության խորությունից:

5. Գնահատման և ընտրության գործընթաց

Պարտադիր որակավորման չափանիշներ

Թեկնածուները պետք է համապատասխանեն հետևյալ պարտադիր նվազագույն որակավորումներին, որոնք կգնահատվեն Pass/Fail (համապատասխանում է/չի համապատասխանում) սկզբունքով: Եթե հայտատուն չի համապատասխանում պարտադիր որակավորման որևէ չափանիշի, նա կբացառվի մրցութային գործընթացից:

- Առնվազն 3 տարվա փորձ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-ների) հետ կազմակերպական զարգացման, կարողությունների գնահատման, մասնակցային ռազմավարական պլանավորման և կարողությունների զարգացման գործողությունների ծրագրերի մշակման ոլորտներում:
- Առնվազն 3 տարվա փորձ մասնակցային խմբային աշխատանքի ֆասիլիտացման ոլորտում (օրինակ՝ ինտերակտիվ առկա կամ առցանց աշխատարանների և այլ համապատասխան միջոցառումների անցկացում):

- Լեզվական հմտություններ՝ հայերեն և անգլերեն լեզուների գերազանց իմացություն:
- Մանրամասն կենսագրական (CV), ներառյալ առնվազն երկու հղում (reference) այն անձանցից կամ կազմակերպություններից, որոնք ծանոթ են դիմորդի աշխատանքին:
- Կարճ մոտիվացիոն նամակ՝ նկարագրելով հետաքրքրվածությունը տվյալ պաշտոնով և համապատասխանությունը պահանջներին:
- Հավաստագրեր և/կամ հղումներ, որոնք հաստատում են գիտելիքներն ու հմտությունները:
- Լրացված տեխնիկական և ֆինանսական առաջարկ:

Չափանիշներ	**Միավորներ**	**Առավելագույն միավորներ**
Տեխնիկական գնահատում՝ հիմնված ինքնակենսագրության վրա		
Առնվազն 3 տարվա փորձ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-ների) հետ՝ կազմակերպական զարգացման, ՔՀԿ-ների կարողությունների գնահատման, մասնակցային ռազմավարական պլանավորման և կարողությունների զարգացման գործողությունների ծրագրերի մշակման ոլորտներում:	3 տարի – 5 միավոր; +1 միավոր յուրաքանչյուր լրացուցիչ տարվա համար (առավելագույնը՝ 10 միավոր)	10 միավոր
3 տարվա նվազագույն փորձ մասնակցային խմբային աշխատանքի ֆասիլիտացման ոլորտում (օրինակ՝ ինտերակտիվ առկա կամ առցանց աշխատարանների անցկացում և այլ համապատասխան գործողություններ):	3 տարի – 5 միավոր; +1 միավոր յուրաքանչյուր լրացուցիչ տարվա համար (առավելագույնը՝ 10 միավոր)	10 միավոր
Առնվազն 2 տարվա փորձ մեդիագրագիտության,	2 տարի – 5 միավոր; +1 միավոր	10 միավոր

տեղեկատվական դիմակայունության, ռազմավարական հաղորդակցության, ապատեղեկատվության հակազդման և/կամ FIMI-ի հետ կապված նախաձեռնությունների ոլորտներում:	յուրաքանչյուր լրացուցիչ տարվա համար (առավելագույնը՝ 10 միավոր)	
Ընդհանուր միավորներ	15	30
Հարցազրույցի հիման վրա տեխնիկական գնահատում		
Չափանիշներ	**Միավոր**	**Առավելագույն կարողությունների մակարդակ**
Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների վերաբերյալ ցուցաբերված ըմբռնում, ներառյալ կազմակերպական զարգացման կարիքները, գործառնական մարտահրավերները և ժողովրդական, համայնքային և արդեն իսկ գործող ՔՀԿ-ների միջև եղած տարբերությունները:	ուժեղ – 10 միավոր, բավարար - 5 միավոր, սահմանափակ՝ 2 միավոր, ոչ - 0 միավոր	10 միավոր
Ցուցաբերված ընկալում մեդիագրագիտության, տեղեկատվական դիմակայունության, ռազմավարական հաղորդակցության, ապատեղեկատվության, FIMI-ի և քաղաքացիական հասարակության դերի վերաբերյալ՝ համայնքային դիմակայունության ամրապնդման գործընթացում:	ուժեղ –10 միավոր, բավարար - 5 միավոր, սահմանափակ՝ 2 միավոր, ոչ - 0 միավոր	10 միավոր
Ցուցաբերված կարողություն մասնակցային աշխատարաններ ֆասիլիտացնելու, խմբային դինամիկան կառավարելու և ֆասիլիտացման մոտեցումները տարբեր կազմակերպական համատեքստերին ու	ուժեղ –10 միավոր, բավարար - 5 միավոր, սահմանափակ՝ 2 միավոր,	10 միավոր

մարտահրավերներին համապատասխանեցնելու:	ոչ - 0 միավոր	
Ցուցաբերված ընկալում և գործնական կիրառություն կազմակերպական գնահատման մեթոդաբանությունների վերաբերյալ, ներառյալ գնահատման արդյունքների վերլուծության և ՔՀԿ-ներին աջակցելու կարողություն՝ իրատեսական, գործնական և չափելի Կազմակերպական զարգացման գործողությունների ծրագրերի (DAP-երի) մշակման հարցում:	ուժեղ –10 միավոր, բավարար - 5 միավոր, սահմանափակ՝ 2 միավոր, ոչ - 0 միավոր	10 միավոր
Ընդհանուր միավորներ՝	20	**40 միավոր**

Ֆինանսական գնահատման համար կքննարկվեն միայն առնվազն 35 միավոր հավաքած թեկնածուները:

Տեխնիկական և ֆինանսական առաջարկի ձևանմուշ

Խնդրում ենք լրացնել ստորև բերված աղյուսակը որպես ձեր դիմումի մաս: Այն կօգտագործվի ձեր մոտեցման տեխնիկական որակը և ձեր առաջարկի ծախսարդյունավետությունը գնահատելու համար: Ընդհանուր գինը պետք է արտահայտված լինի ՀՀ դրամով (զուտ) :

Տեխնիկական և ֆինանսական առաջարկ				
4-րդ բաժնում:	Մեթոդաբանական մոտեցում (*համառոտ նկարագրեք, թե ինչպես եք կատարելու առաջադրանքը*)	Միավոր (8 ժամ)	Մեկ միավորի գինը (դրամ)	Ենթագումար (ՀՀ դրամ)

*Ֆինանսական առաջարկը այն անհատի կողմից, որը գրանցված չէ որպես ձեռնարկատեր, պետք է ներկայացվի ՀՀ դրամով՝ ներառելով եկամտային հարկը, առողջության ապահովագրությունը և սոցիալական ապահովության վճարները:

Գնահատումը կիրականացվի 70% տեխնիկական և 30% ֆինանսական չափանիշների հիման վրա:

7. Դիմելու գործընթացը

Հետաքրքրված անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- *Կենսագրական (CV).* մանրամասն CV՝ ներառյալ առնվազն երկու հղում (reference) այն անձանցից կամ կազմակերպություններից, որոնք ծանոթ են դիմորդի աշխատանքին:
- *Մոտիվացիոն նամակ*. կարճ նամակ՝ նկարագրելով հետաքրքրվածությունը տվյալ պաշտոնով և համապատասխանությունը պահանջներին:
- *Հավաստագրեր*. գիտելիքներն ու հմտությունները հաստատող փաստաթղթերի պատճեններ:
- *Լրացված տեխնիկական և ֆինանսական առաջարկ* (Հավելված 1):
- *Պետական գրանցման վկայականի պատճեն*՝ եթե դիմորդը իրավաբանական անձ է:

Դիմումները պետք է ուղարկվեն մինչև **2026 թվականի հուլիսի 21-ը , ժամը 23:59-** ը: procurement.armenia@peopleinneed.net թեմայի տողում նշելով՝ **«OCAT -IR – [Անուն, Ազգանուն]»**:

Կապ կհաստատվի միայն ընտրված դիմորդների հետ: